ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՋԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՋԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՓԼՈՒՋՈՒՄԻՑ

Խորհրդային զինվորականները նացիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի տարեդարձը նշեցին ըմբոստ հանրապետություններին խիստ զգուշացնելով Միությունը քանդելու որեւէ փորձի դեմ: «*Ըրավդայում*» ստորագրված մի հոդվածով, նախարար Յազովը գրեց. «Այսօր փառասեր մարդիկ, ազգայնականներ եւ անջատողականներ, իրենց ուժերն են գործադրում Միությունն ավերելու: Միայն միակ ու հզոր սուվերեն հանրապետությունների միությունն է, որ կարող է որպես գերհզոր պետություն գործել համաշխարհային ասպարեզում: Եւ պատերազմը դա է ապացուցել աշխարհին»:

Յազովի վերոհիշյալ հաստատումներն արձագանքվեցին այլ զինվորականների կողմից, որոնց ելույթները հրապարակվեցին կոմունիստական կուսակցության հակակշռի տակ գտնվող մամուլում: Օդուժի թռչակառու հրամանատար մարշալ Իվան Կոժեդուբը ազգայնականներին նմանեցրեց պարտված ֆաշիստներին: «...Զինվորականները մի անգամ եւս պաշտպանված էին կատարելու իրենց պարտականությունները՝ արգելք հանդիսանալով պետության գերեզմանափորների դերը վերցրած փառասեր մարդկանց նկրտումներին», գրում է նա «*Ռաբոչայա տրիբունա*» թերթում: Յազովը նույնպես կոչ արեց խորհրդային ժողովրդին արթուն մնալու Արեւմուտքի դեմ: «Ռազմական հավասարակշռությունը պետք է պահպանվի, որովհետեւ «ոչ մի երաշխիք չկա, որ դրական պրոցեսները «անշրջելի են մնալու», գրում է նա: Վարշավայի ուխտի կազմալուծմամբ, նրա կարծիքով, «ռազմաքաղաքական դրությունը արմատապես փոփոխվում է, բայց ոչ Խ. Միության օգտին»: Ըստ Յազովի, նացիստական Գերմանիայի հարձակումը Խ. Միության վրա վկայում է, որ Խ. Միությունը երբեք չպետք է անթույլատրելիորեն կինաթափվի եւ կորցնի իր աշխարհությունը նույնիսկ հանուն խաղաղության: Յազովն օրինակ է բերում Պարսից Ծոցի պատերազմը, որով, ըստ նրա, ռազմական սպառնալիքի վրա հիմնված համաշխարհային նոր համակարգի ստեղծումը առարկայական իրականություն է դարձել:

Այս զգուշացումները կատարվում են Կովկասում Հայաստանի ազգայնական կառավարության եւ Խ. Միության ապստամբական ուժերի միջեւ սաստկացող լարվածության ոլորտներում: Առաջին անգամ, խորհրդային բանակը ուղղակի մասնակից է դառնում, ինչպես իրենք են ասում, հայկական հակաօրինական զինված ջոկատների դեմ գործողություններում: Կոնֆլիկտը արդյունք է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ խորացող վեճի:

«*Իզվեստիայում*» տպագրված մի հարցազրույցի ժամանակ, կենտրոնական ներքին գործոց նախարարությանը պատկանող ուժերի հրամանատար Յուրի Շատալինը հայտնեց, թե բանակն իր պատասխանատվությունն է ստանձնել Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանների հսկողության գործում: Գեներալ Շատալինն ասում է, թե կորքերի այդ «վերադասավորումը» վախեցրել է մի շարք մարդկանց եւ «առիթ տվել բանակի վրա կրակ բացելու»: Շատալինն ասում է, որ անցյալում բանակը զգուշանում էր բնակչության հետ կոնֆլիկտի մեջ մտնելուց, բայց այժմ հրահանգ ունի պատասխանել կրակին:

Այսուհանդերձ, հայկական կառավարության, ինչպես նաեւ արեւմտյան լրագրողների տեղեկությունները այլ վարկած ունեն: Հայ պաշտոնական դեմքերը կենտրոնին ամբաստանում են Հայաստանի դեմ «պատերազմ հայտարարելու» ու անկախության ձգտման համար պատժելու մեջ:

Ըստ հայկական կողմի, Ադրբեջանը կենտրոնից ավեր է ստանում Միության կազմի մեջ մնալու իր որոշման փոխարեն:

Երկու հանրապետությունների սահմանային շրջաններից հաղորդված «Ռոյթեր» գործակալության մի լրատվության մեջ նկարագրվում է, թե ինչպես 200 բանակայիններ, ուղղաթիռներով ու հրասայլերով հարձակվել են լեռնային Շուշուխ գյուղի վրա եւ այնտեղից վերցրել 25 պատանդների:

Բանակայինները կրակ են բացել հայ ոստիկանների վրա:

Պրեզիդենտ Գորբաչովի, դեռեւս իր թիմում գտնվող սակավաթիվ լիբերալներից Վադիմ Բակատինը, մեկնաբանելով պատերազմի տարեդարձը «*Կարմիր աստղ*» օրաթերթի հետ հարցազրույցում, վերոհիշյալ իրադարձությունների կապակցությամբ ավելի հավասարակշռված մոտեցում է ցուցաբերում: «Միությունն անհրաժեշտ է, նույնիսկ անխուսափելի, բայց ժամանակակից աշխարհում միություն կարելի է միայն կամավոր սկզբունքներով»,- ասում է նա:

Բակատինը զգուշացնում է, որ «բոլոր այն փորձերը, նույնիսկ լավագույն ցանկություններով, որոնք նպատակադրվում են ուժի միջոցով Միությունը պահպանելու, միայն քանդել կարող են այն»: Ի դեպ, Բակատինը անցյալ դեկտեմբերին հանվել էր ներքին գործոց նախարարի պաշտոնից:

ԴԱՆԻԵԼ ՇԼԱՅՈՐ
10 մայիս, 1991